

Հայաստանի Հանրապետության, Երևանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի  
անվ. թ. 168 հիմնադրոց ՊՈԱԿ –ի ուսումնական հաստատության տնօրենի 2022թ.–ի  
օգոստոսի 31-ի N \_\_\_\_\_ հրամանով

Հաստատված է \_\_\_\_\_  
Դպրոցի տնօրեն Գոհար Մելիք-Ստեփանյան

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱԶԻՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ Գ.168  
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

2022–2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ



## ԳՈՐԾԱԾՎՈՂ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

- ՊԿԼՄ - Պետական կառավարման լիազորված մարմին
- ՈԲԴԱՊ - Ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան
- ՈԲԱԳՏ - Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ուսումնադաստիարակչական գծով տեղակալ
- ՄԿԱԳՏ - Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ
- ԴԱԿ - Հանրակրթական ուսումնական հաստատության՝ սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ
- Մ/Մ - առարկայական մեթոդական միավորում
- ԱԽ - աշակերտական խորհուրդ
- ԾԽ–ծնողական խորհուրդ
- ԿԽ– կառավարման խորհուրդ
- ԱՈԻՊ - անհատական ուսուցման պլան
- ԿԱՊԿ - կրթության առանձնահատուկ պայմանների կարիք



## ՆԱԽԱԲԱՆ

Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանի կազման հիմքում ՀՀ §3անրակրթության մասին» օրենքում» ամրագրված փոփոխություններն են, ՊՈԱԿ–ի օրինակելի կանոնադրության սահմանումները, տնօրենի կողմից կազմված դպրոցի զարգացման հնգամյա ծրագրի կատարողականի և ներքին գնահատման արդյունքները: Աշխատանքներին մասնակցել են դպրոցի բոլոր օղակները՝ ներկայացնելով առաջարկներ, կատարելով 2021–2022 ուստարվա աշխատանքների վերլուծություն:

Առաջնորդվելով §3անրակրթության մասին օրենքով՝ դպրոցը որդեգրել է ամրագրված նպատակները.

<http://www.irtek.am/views/act.aspx?aid=150065>

### **Հոդված 5. Հանրակրթության նպատակները և պետական քաղաքականության սկզբունքները**

#### **1. Հանրակրթությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր սովորողի՝**

- 1) մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը.
- 2) մարդկային արժանապատվության պահպանմանը.
- 3) իր ընդունակություններին, կարողություններին և առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը.
- 4) ինքնասպասարկման ունակությունների ձեռք բերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը.
- 5) մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստմանը.
- 6) ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովմանը.
- 7) որպես ապագա քաղաքացու ձևավորմանը:

#### **2. Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը.**

1) հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը.

2) հանրակրթության հավասար հնարավորությունները, մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին.

3) հանրակրթության բնագավառում ժողովրդավարական կառավարման սկզբունքների ապահովումը.

4) ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը.

5) հանրակրթության որակի շարունակական բարելավումը, միջազգային չափանիշներին համապատասխանությունը, ինչպես նաև միջազգային կրթական համակարգին ինտեգրումը.

6) ուսումնական հաստատությունների ինքնավարության և պետական վերահսկողության հավասարակշռումը.

7) անկախ կազմակերպական-իրավական ձևից՝ ուսումնական հաստատությունների և դրանցում սովորողների ու աշխատողների իրավահավասարությունը.

8) հանրակրթական և այլ կրթական ծրագրերի փոխհամաձայնեցվածությունը:

### **III. ԴՊՐՈՑԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

<https://www.arlis.am/documentview.aspx?docid=114876>

### **IV. ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

27. Դպրոցի կառավարման մարմիններն են՝

1) հիմնադիրը.

2) նախարարությունը, տարածքային կառավարման մարմինը, Երևանի քաղաքապետը (այսուհետ՝ լիազորված մարմին).

3) կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը.

4) գործադիր մարմինը՝ դպրոցի տնօրենը:

**2022-2023 ուստարում ուսումնադաստիարակչական աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու, ուսման որակը բարձրացնելու նպատակով կարևորում ենք հետևյալ կետերը:**

- 1.Սահմանել հսկողություն էլեկտրոնային մատենավարությանը:
- 2.Հանձնարել ուսուցիչներին լրացուցիչ աշխատանք տանել թույլ և չառաջադիմող սովորողների հետ:
- 3.Հսկել մ/մ աշխատանքները և մասնակցել նիստերին:
- 4.Պահպանել դասալսումների քանակը՝ շաբաթական միջինը 6 ժամ :
- 5.Դպրոցի դաստիարակչական աշխատանքներում շարունակաբար համագործակցել ծնողական խորհրդի հետ:
- 6.Ուշադրության կենտրոնում պահել աշակերտական ինքնավարության մարմինների աշխատանքները: /Ա.Խ/
- 7.Ներքին վերահսկողության միջոցով կատարել սովորողների կարողունակությունների զարգացման դինամիկայի գնահատում:
- 8.Նպաստել մանկավարժական համակազմի ուսուցման ձևավորման հմտությունների զարգացմանը, մանկավարժական գիտական հետազոտական աշխատանքների իրականացմանը:
- 9.Մեծ ուշադրություն դարձնել աշակերտների հայրենասիրական դաստիարակությանը, կազմակերպել դասղեկի ժամեր նվիրված ՀՀ խորհրդանիշներին և Հայոց բանակին, հայկական մշակույթին, իրականացնել ճանաչողական դաս-էքսկուրսիաներ:
- 10.Մանկավարժական կոլեկտիվի աշխատանքները իրականացնել պետական չափորոշիչներով առաջադրված խնդիրներին համապատասխան և նպաստել սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը:
- 11.Խրախուսել առարկայական օլիմպիադաներում հաղթող սովորողներին, գիտաժողովներում գեկույցով հանդես եկող մանկավարժներին և աշակերտներին:
- 12.Դպրոցի կառավարմանը մասնակից դարձնել ծնողական և աշակերտական խորհուրդներին, այն դիտել, որպես քաղաքացիական հասարակության կառուցման հիմնաքար:

**2022–2023 ուսումնական տարում հաստատությունում ուսումնական պարապմունքները սկսվում է 2022թ.–ի սեպտեմբերի 1–ին և ավարտվում 2023թ.–ի մայիսի 26–ին:**

**Ուսումնական շաբաթներ**

դասարան	I կիսամյակ	II կիսամյակ	ընդամենը
1–ին դասարան	14շաբաթ և 2 օր	16 շաբաթ	30 շաբաթ
2–րդ դասարան	15շաբաթ և 2 օր	17շաբաթ	32շաբաթ
3–րդ – 12–րդ դասարաններ	15շաբաթ և 2 օր	19 շաբաթ	34 շաբաթ

**Ուսումնական պարապմունքների ընթացքում սովորողներին տրամադրվող արձակուրդների ժամանակացուցը 2022–2023 օրինակելի ուսպլանի համաձայն՝ / 2021թ. հոկտեմբերի 20–ի N 54-Ն հրաման/**

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=154629>

2022-2023 ուսումնական տարում՝

- 1) Ուսումնական պարապմունքների ընթացքում 3-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ՝ աշնանային՝ 2022թ. հոկտեմբերի 24-ից 30-ը ներառյալ, ձմեռային՝ 2022թ. դեկտեմբերի 26-ից 2023թ. հունվարի 8-ը ներառյալ, գարնանային՝ 2023թ. մարտի 27-ից ապրիլի 2-ը ներառյալ:
- 2) Առաջին դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2022թ. հոկտեմբերի 17-ից 30-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2022թ. դեկտեմբերի 26-ից 2023թ. հունվարի 22-ը ներառյալ, գարնանայինը՝ 2023թ. մարտի 20-ից ապրիլի 2-ը ներառյալ:
- 3) Երկրորդ դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2022թ. հոկտեմբերի 24-ից 30-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2022թ. դեկտեմբերի 26-ից 2023թ. հունվարի 22-ը ներառյալ և գարնանայինը՝ 2023թ. մարտի 27-ից ապրիլի 2-ը ներառյալ:

ԿԳՄՍ նախարարությունն անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետ և այլն) կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ կատարելով փոփոխություններ ուսումնական պարապմունքների և սովորողների համար սահմանված արձակուրդների ժամանակացույցերում: Այդ փոփոխությունները կարող է կատարել նաև ուսհաստատությունը՝ բաց թողնված ժամերը մինչև ուսումնական պարապմունքների ավարտը լրացնելու կամ ուսումնական պարապմունքները հեռավար եղանակով կազմակերպելու՝ լիազոր մարմնին տեղեկացնելու պայմանով:

## 2022–2023 ուսումնական տարվա համար սահմանվում է.

### **Ուստարվա նպատակը՝ Ապահովել սովորողների կրթության որակը.**

- Ձևավորել մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության ու մարդասիրության ոգով դաստիարակված անձ:

- Չարգացնել ապագա շրջանավարտի նկարագրին վերաբերող ռազմավարական դրույթները:

### **Ուստարվա հիմնախնդիրները՝**

- Ամրապնդել ծնող-դպրոց համագործակցությունը՝ ապահովելով ծնողների հոգեբանամանկավարժական տեղեկատվությունը, նրանց մասնակցությունը ուսումնադաստիարակչական աշխատանքներին և դպրոցի կառավարման գործընթացին:

### **Ուստարվա հիմնական դաստիարակչական խնդիրներ**

- Կազմակերպել բազմաբովանդակ միջոցառումներ՝

Սովորողների մեջ համընդհանուր դաստիարակության / գեղագիտական, բարոյական, հայրենասիրական, քաղաքացիական, ֆիզիկական, ռազմահայրենասիրական, բնապահպանական, իրավական / զարգացման ուղղությամբ:

- Սովորողների մեջ ձևավորել դրական վերաբերմունք ուսման, կառուցողական հաղորդակցման, կենդանի բնության, սեփական առողջության և այլ մարդկանց առողջության նկատմամբ.

- Սովորողների մեջ ձևավորել խոսքի միջոցով համագործակցային փոխհարաբերություններ կառուցելու, իր և ուրիշների համար թիմով աշխատելու նպաստավոր մթնոլորտ ստեղծելու կարողություն.

- Սովորողների մեջ դաստիարակել ռազմական գիտելիքների կայուն պաշար կրող, մարտունակ և կարգապահ զինվոր:

- Շարունակել վերահսկողական աշխատանքները սովորողների հաճախելիությունը բարելավելու նպատակով:

Հանձնարարել մեթոդմիավորումներին՝ մշակել սույն ծրագրից բխող աշխատանքային ծրագիր, հետևողական աշխատանք տանել այն ուստարվա ընթացքում իրագործելու համար:

## ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ



**ԴՊՐՈՑԻ ԿԱՐԳԱԽՈՍՆ Է.**

**«Հայրենիք ստեղծելը հերոսություն է,**

**հայրենիք շենացնելը՝ առաքինություն»**

**Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս**

Դպրոցի անվանումը, համարը՝ «Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի անվ.Երևանին հ.168 հիմնական դպրոց » ՊՈԱԿ

Դպրոցի հասցեն՝ Բաշինջաղյան 1-ին նրբանցք

Դպրոցի հեռախոսահամարը, Էլեկտրոնային հասցեն՝ 35-04-01, [yerevan168dproc@mail.ru](mailto:yerevan168dproc@mail.ru)

Դպրոցի ինտերնետային կայքի հասցեն՝ <https://yerevan168.schoolsite.am>

Երանի հ.168 հիմնական դպրոցն իրականացնում է սովորողների միահերթ հաճախմամբ ուսուցում՝ հնգօրյա շաբաթական ռեժիմով: Առաջին դասաժամն ազդարարվում է 08:30–ին: Մեկ ակադեմիական դասաժամի տևողությունը 45 րոպե է: Դպրոցական պարապմունքների և դասամիջոցների ժամանակացույցը, դասարանների կահավորումը կազմվել է հնարավորինս պահպանելով ԱՆ պահանջը՝ «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը՝ համաձայն հավելվածի:

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=112989>

Հաստատության (դպրոցի) ուսուցման լեզուն գրական հայերենն է:

Հաստատությունն ուսումնական գործընթացն իրականացնում է ՀՀ ԿԳՄՍ

նախարարության սահմանած ուսումնական պլանով և ծրագրերով:



Գործում է սովորողների ուսումնառության գնահատման 10 միավորային սանդղակ:  
Գնահատումն իրականացվում է օրինակելի ուսալանի II կետի 18–26 ենթակետերի համաձայն:

<https://escs.am/files/files/2021-07-23/43d5f7a1ef65489be8bd0e1ac33752cc.pdf>

Դպրոցի տնօրեն՝ Գոհար Մելիք–Ստեփանյան

ՈԻԱԳՏ՝ 1. Սվետլանա Աբրահամյան,  
2. Կարինա Մկրտչյան,  
3. Գայանե Մադաթյան

ՄԿԱԳՏ՝ 1. Անահիտ Մովսիսյան

ԴԱԿ՝ 1.

ՏԱԳՏ՝ 1. Լիլիթ Կարապետյան

Զինդեկ՝ 1. Արմեն Մարգարյան

Հաշվապահ՝ 1. Էմմա Հայրապետյան

Գրադարանավար՝ 1. Սուսաննա Պողոսյան

Դպրոցի կոլեգիալ կառավարման առանձին խորհուրդը կազմված է 9/ինը/ անձից:

Դպրոցի բոլոր մանկավարժները ՄԽ–ի անդամ են:

Դպրոցն ունի ԾԽ և ԱԽ

Զևավորվել են 8 /ութ/ առարկայական մասնախմբեր՝ Մ/Մ

1. Հայոց լեզու և գրականություն

2. Պատմություն, ՀԵՊ, հասարակագիտություն

3. Ռուսաց լեզու

4. Օտար լեզու / անգլերեն և ֆրանսերեն /

5. Մաթեմատիկա և ինֆորմատիկա

6. Տարրական դասարաններ

7. Բնագիտական /աշխարհագրություն, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, բնագիտություն/

8. Ռազմամարզական և մշակութային / ՆՁՊ, ֆիզկուլտուրա, ազգային երգ և

պար, երաժշտություն, կերպարվեստ, տեխնոլոգիա /

Դպրոցը գործում է իրավաբանական անձի պետական գրանցման ՀՀ պետռեգիստրի 03 Ա 058218–ի վկայականի համաձայն: Սովորողների առավելագույն լիցենզավորված թույլատրելի թիվը՝1392 սովորող:

2022–2023 ուստարում ձևավորվել են թվով 50 /հիսուն/ դասարաններ՝ սովորողների 28 /քսանութ/ թվաքանակի միջին խտությամբ:

**2022–2023 ուստարում դպրոցի հիմնախնդիրներն են.**

1. Դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում
2. Ուսումնական ծրագրերի կատարում
3. Ուսումնական պարամոլներին դասացուցակի կազմում
4. Սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության կանոնակարգում
5. Մեթոդական աշխատանքների կանոնակարգում
6. Առարկայական մեթոդ միավորումների աշխատանքների ղեկավարում
7. Դասավանդման որակի վերահսկում
8. Սովորողների գիտելիքների մակարդակի բարձրացման և կարողունակությունների ձևավորման վերահսկում
9. Ուսուցչի լավագույն աշխատանքի, դրական փորձի տարածում
10. Ուսուցիչներին իրազեկում մանկավարժական ոլորտում տեղ գտած նորությունների և փոփոխությունների մասին

Օգոստոս–Սեպտեմբեր ամիսներին աշխատանքի կազմակերպումը

	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՆՏՈՒ	ՆՇՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ
	<p>ՊԿԼՄ–ի կողմից հանձնարարականների մասին իրազեկում և հասցեական համակարգում:</p> <p>Կատարել վերջնական դասաբաշխում և ուսպլանով նախատեսված դպրոցական բաղադրիչի բաշխում</p>	<p>Տևոթն 2022–2023 ուստարի</p> <p>Տևոթն, ՈՒԱԳՏ օգոստոս</p>	


1.	Դպրոցի նոր՝ 2022–2023 ուստարվա ուսումնական պլանի քննարկում և հաստատում	տնօրեն օգոստոս	
2.	<p>Դպրոցի 2022–2023 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի քննարկում և հաստատում:</p> <p>Դպրոցի տնօրենի տեղակալների պարտականությունների քննարկում և հաստատում, նոր ուստարվա խնդիրների քննարկում:</p>	օգոստոս	
3.	<p>Մանկավարժական կադրերի, մյուս աշխատողների ընտրություն և վերատեղաբաշխում</p> <p>Առաջին դասարանների կոմպլեկտավորում</p> <p>«Մաթեմատիկա» առարկայի խորացված ուսուցմամբ մեկ՝ 5–րդ դասարանի կոմպլեկտավորում:</p>	օգոստոս Տնօրեն Ուլլահ	
4.	Ուսուցչին աջակցող մենթորական մեթոդական խմբի ձևավորում:	օգոստոս Տնօրեն Ուլլահ	
5.	Կոմպլեկտավորել դասարանները, նշանակել դասվար–դասղեկներ / հրամանագրել /	Տնօրեն օգոստոս	
6.	Կայուն դասացուցակի հաստատում, առարկայական մասնախմբերի շրջանում քննարկել և մասսայականացնել	Տնօրեն Ուլլահ ՄՄ նախագահներ	

	գնահատման հետ կապված փոփոխությունները	Սեպտեմբերի առաջին շաբաթ	
7.	Աշխատակազմի հաստատում դպրոցի, ուսուցիչների առանձին օղակների համար: Յոգեբանամանկավարժական աջակցող թիմի մասնագետների, ուսուցիչների մասնագիտական զարգացման աջակցող մենթորական խմբի աշխատանքային ծրագրերի հաստատում:	Տնօրեն ՌԻԱԳՏ ՏԱԳՏ Մինչև սեպտեմբերի 10-ը	
8.	Դպրոցի գրադարանը հարստացնել մանկավարժական մեթոդական նոր գրականությամբ	Գրադարանավար ՄՄ նախագահներ	
9.	Դասագրքերի ֆոնդի վերանայում և ըստ անհրաժեշտության պակասի լրացում: Դպրոցական դասագրքերի բաշխում, նոր դասագրքերի ստացում:	օգոստոս Գրադարանավար Դասղեկներ Ըստ տնօրենի կողմից հաստատված ժամանակացույցի	
10.	Ներքին կարգապահական կանոնների, այդ թվում աշխատողների և սովորողների վարքականոնների հիշեցում	Տնօրեն ՄԿԱԳՏ Մինչև սեպտեմբերի 5-ը	
11	Յաստատել աղետների ռիսկի կառավարման և արտակարգ իրավիճակներում գործելու և քաղաքացիական պաշտպանության պլանները	Տնօրեն օգոստոս	
12	Կազմել և վարել դպրոցի ուսուցիչների հաճախումների և փոխարինած ժամերի հաշվառման մատյան	ՌԻԱԳՏ օգոստոս	

13	Հատուկ հսկողություն սահմանել ուսուցիչ–սովորող, ուսուցիչ– ուսուցիչ, վարչակազմ– ուսուցիչ – մանկավարժական աշխատողներ փոխհարաբերության մեջ միասնական, կանոնադրական պահանջների կատարմանը, չեզոքացնել բուլինգի դրսևորման նախանշանները՝ դրանք առաջանալու դեպքում:	Տնօրենություն մշտապես	
14	Կազմակերպել և իրականացնել ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթ	Տնօրեն Պատասխանատու Ըստ անհրաժեշտության տարվա ընթացքում	
15	Ուսուցիչներին ապահովել առարկայական ծրագրերով և մեթոդական գրականությամբ	ՈԲԱԳՏ Գրադարանավար օգոստոս	
16	Առարկայական մեթոդ. միավորումների տարեկան հաշվետվության հիման վրա քննարկել անելիքները	Տնօրեն, ՈԲԱԳՏ, ՄՄ Նախագահներ, մանկավարժական մենթորական աջակցող թիմ  օգոստոս	
17	Մեթոդական միավորումների տարեկան պլանի քննարկում և հաստատում	Տնօրեն, ՈԲԱԳՏ, ՄՄ Նախագահներ Մինչև սեպտեմբերի 10–ը	
18	Տնօրենի տեղակալների աշխատանքային ծրագրերի քննարկում և հաստատում	Մինչև սեպտեմբերի 5–ը	
19	Ստուգել և հաստատել ուսուցիչների առարկայական թեմատիկ պլանները: Թեմատիկ պլաններում առարկայի չափորոշչային պահանջների համապատասխանության և լիարժեքության մասին ներկայացնել հաշվետվությունս դպրոցի տնօրենին:	ՈԲԱԳՏ, ՄՄ Նախագահներ Օգոստոս  Մինչև սեպտեմբերի 15–ը	

20	<p>Էլեկտրոնային փաստաթղթավարության համապատասխան էջերում և պատուհաններում դպրոցի կողմից օգոստոս–սեպտեմբեր ամիսներին պահանջվող աշխատանքների կատարման, Էլեկտրոնային մատյանի վարման վերահսկում Զանձնարարել Էլեկտրոնային մատյանը վարել պատասխանատու և պատշաճ ձևով.</p> <p>ա. թեմաները գրանցել ըստ թեմատիկ պլանի,</p> <p>բ. տնային աշխատանքները գրանցել բոլոր դասերի համար,</p> <p>գ. գնահատականները նշանակել ժամանակին,</p> <p>դ. սովորողների միավորային գնահատականները Էլեկտրոնային մատյան անցկացնել երեք օրվա ընթացքում:</p>	Տնօրենություն	
----	---	---------------	--

## Ուսումնադաստիարակչական գործընթացի պլանավորում



Աշխատանքի բովանդակությունը		Կատարման ժամկետը	Պատասխանատու/կատարող
1.	Անցկացնել տնօրենին կից խորհրդակցություններ	Շաբաթը մեկ անգամ (անհրաժեշտության դեպքում՝ արտահերթ)	Տնօրեն
2.	Նախապատրաստել դասասենյակները, կաբինետները, ուսումնական գույքը և սարքավորումները նոր ուսումնական տարվան	Օգոստոս	Վարչական, մանկավարժական, ուսումնաօժանդակ աշխատողներ
3.	Աշխատանք տանել կաբինետները և դասարաններն անհրաժեշտ նյութերով ու սարքավորումներով կահավորելու ուղղությամբ:	Ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, ԾԽ, ՇԽ
4.	Վերահսկել սանիտարահիգիենիկ վիճակը, անվտանգության տեխնիկայի ապահովումը	Ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, դպրոցի աշխատողներ, բուժքույր
5.	Կատարել աշխատանքի բաժանում	Ուսումնական տարվա սկիզբ	Տնօրեն
6.	Ապահովել գործածության ենթակա փաստաթղթերի վարումը և պահպանումը	Ուսումնական տարվա ընթացքում	Վարչական և մանկավարժական աշխատողներ
7.	Ուսումնասիրել աշակերտների շարժը և կազմել հաշվետվություն	Օգոստոս, 1-ին կիսամյակի ավարտ, 2-րդ կիսամյակի ավարտ	Տնօրեն, ՈՒԱԳՏ

8.	Կոմպլեկտավորել 1-ից 9-րդ դասարանները	Օգոստոս	Տնօրեն
9.	Նշանակել դասագրքերի ներդրումային գումարների հավաքագրման, դասագրքերի և ուսուցչի ձեռնարկների հատկացման և ուսումնական տարվա ավարտին դրանց հետ հավաքագրման աշխատանքների պատասխանատու	Օգոստոս	Տնօրեն
10	Կատարել դասագրքերի բաշխում՝ սահմանված ժամանակացույցով	Օգոստոս	Տնօրեն, գրադարանավար, դասուղեկներ
11	<ul style="list-style-type: none"> <li>➤ Ձևավորել մեթոդական միավորումներ,</li> <li>➤ Նշանակել մեթոդական միավորումների նախագահներ</li> <li>➤ Հրավիրել առարկայական մեթոդական միավորումների նիստեր</li> <li>➤ Մասնախմբերի նիստերին հանդես գալ մանկավարժական գեկույցով</li> <li>➤ Ձևավորել 8-10 հոգուց կազմված մանկավարժական մենթորական աջակցման խումբ՝ ներառելով փորձառու և առաջադեմ մանկավարժների</li> </ul>	Օգոստոս Ուսումնական տարվա ընթացքում՝ առնվազն ամիսը մեկ անգամ	Տնօրեն, ՈԲԱԳՏ, մեթոդական միավորման նախագահներ, անդամներ,
12	Գումարել մանկավարժական խորհրդի նիստեր (անհրաժեշտության դեպքում՝ արտահերթ)	Ուսումնական տարվա ընթացքում՝ օգոստոս ամսից սկսած՝ առնվազն 2 ամիսը մեկ անգամ	Տնօրեն, մանկավարժական խորհրդի անդամներ, լիազորված մարմին
13	Գումարել կառավարման խորհրդի նիստեր (անհրաժեշտության դեպքում՝ արտահերթ)	Ուսումնական տարվա ընթացքում՝ օգոստոս ամսից սկսած՝ յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ	Խորհրդի նախագահ, անդամներ, տնօրեն, լիազորված մարմին
14	Հրավիրել համադպրոցական ծնողական ընդհանուր ժողով	1-ին կիսամյակ, 2-րդ կիսամյակ (առնվազն 2 անգամ)	Տնօրեն, ծնողական խորհուրդ, ՄԿԱԳՏ
15	Հրավիրել ծնողական խորհրդի նիստ (անհրաժեշտության դեպքում՝ արտահերթ)	Սեպտեմբեր, ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, ԾԽ նախագահ



16	<ul style="list-style-type: none"> <li>➤ Յուրաքնայուր դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ (բաղկացած 2-4 հոգուց),</li> <li>➤ Ձևավորել դպրոցի ծնողական խորհուրդ</li> <li>➤ Ապահովել ծնողական խորհրդի մասնակցությունը ուսումնական գործընթացին</li> <li>➤ Ապահովել ծնողական խորհրդի գործունեությունը՝ ըստ կանոնադրության</li> </ul>	<p>Սեպտեմբեր</p> <p>Սեպտեմբեր</p> <p>Ուսումնական տարվա ընթացքում</p>	Տնօրեն, դասղեկներ, ՄԿԱ գծով տեղակալ, ծնողներ
17	Հրավիրել համադպրոցական աշակերտական ընդհանուր ժողով (6-9-րդ դասարանների աշակերտներ)	Սեպտեմբեր	Տնօրեն, ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ, աշակերտներ
18	Հրավիրել աշակերտական խորհրդի նիստ (անհրաժեշտության դեպքում՝ արտահերթ)	Ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, ՄԿԱ գծով տեղակալ, ԱԻՆ նախագահ
19	Ապահովել աշակերտական խորհրդի գործունեությունը՝ ըստ կանոնադրության	Ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ, ԱԻՆ նախագահ
20	Կառավարման, մանկավարժական, աշակերտական, ծնողական խորհուրդներում ներկայացնել 2021-2022 ուսումնական տարվա ներքին գնահատման արդյունքները	Օգոստոս- սեպտեմբերի սկիզբ / մինչև 05.09.2022թ/	Տնօրեն
21	Ստեղծել ներքին գնահատման հանձնաժողով	Սեպտեմբեր	Տնօրեն
22	<ul style="list-style-type: none"> <li>➤ Ծանոթացնել աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանին</li> <li>➤ Իրականացնել գործնական պարապմունքներ</li> </ul>	<p>Սեպտեմբեր</p> <p>Ուսումնական տարվա ընթացքում</p>	Տնօրեն, ՈՒԱԳՏ, ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ, ՆՁՊ ուսուցիչ, դպրոցի աշխատողներ, աշակերտներ, ծնողներ
23	Ապահովել սովորողների սոցիալական պաշտպանվածությունը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը ստանալու իրավունքը	Ուսումնական տարվա ընթացքում	Վարչական և մանկավարժական աշխատողներ

24	Կազմել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ցուցակը, Ապահովել՝ հնարավորության սահմաններում, անվճար դասագրքերով	Սեպտեմբեր-հոկտեմբեր	Տնօրեն, ՄԿԱ գծով տեղակալ, դասուցիներ, մանկավարժական և ծնողական խորհուրդներ
25	Ստեղծել տարիֆիկացիոն հանձնաժողով	Սեպտեմբեր	Տնօրեն
26	Կատարել ուսպլանով սահմանված պետական բաղադրիչի նախնական բաշխում և առաջարկություններ կայացնել դպրոցի տնօրենին	Օգոստոս	Ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, մեթոդական միավորման նախագահներ, անդամներ,
27	Կատարել ուսպլանով սահմանված դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ քննարկում և առաջարկություններ կայացնել մանկավարժական խորհրդում	օգոստոս	Մեթոդական միավորման նախագահներ, անդամներ
28	Հաստատել ուսումնական պլանները	Յուրաքանչյուր կիսամյակի սկիզբ	Տնօրեն
29	Քննարկել և հաստատել տնօրենի տեղակալների, դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի (ԴԱԿ), դասուցիների, մեթոդական միավորումների, հոգեբանի, ուսուցչի օգնականների, գրադարանավարի, և այլ մանկավարժական աշխատողների տարեկան աշխատանքային պլանները	Օգոստոս-սեպտեմբեր	Տնօրեն, տեղակալներ, մեթոդական միավորման նախագահներ, դասուցիներ, գրադարանավար, և այլ մանկավարժական աշխատողներ
30	Հաստատել ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանը	Օգոստոսի 31	Տնօրեն
31	Կազմել դասացուցակ, կատարել դասացուցակի ընթացիկ սպասարկում	Օգոստոս-Սեպտեմբեր, ուսումնական պարապմունքների ընթացքում	Ուսումնական աշխատանքի գծով տեղակալ
32	Հաստատել ուսումնական պարապմունքների դասացուցակը	Օգոստոս 31	Տնօրեն
33	Կանոնակարգել սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը	Ուսումնական պարապմունքների ընթացքում	Տնօրեն, ՈՒԱԳՏ

34	<ul style="list-style-type: none"> <li>➤ Կազմել թեմատիկ պլաններ՝ յուրաքանչյուր ուսումնական ծրագրերին, պետական հաստատված առարկայական չափորոշիչներին համապատասխան,</li> <li>➤ Ներկայացնել տնօրենի հաստատմանը</li> </ul>	Սեպտեմբեր	Տնօրեն, ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, մեթոդական միավորման նախագահներ, անդամներ
35	Հաստատել աշխատողների աշխատանքի ժամանակացույցը	Սեպտեմբեր	Տնօրեն
36	<p>Կազմել ուսուցիչների հերթապահության կարգացուցակը</p> <p>Կազմակերպել աշակերտական խորհրդի ընտրությունը</p>	Ուսումնական տարվա ընթացքում	ՄԿԱ գծով տեղակալ
37	<ul style="list-style-type: none"> <li>➤ Կատարել բացակա ուսուցիչների հաշվառում,</li> <li>➤ Արձանագրել բաց թողնված և փոխարինած դասաժամերը</li> <li>➤ Արդյունքները ներկայացնել դպրոցի տնօրենին և հաշվապահին</li> </ul>	Ուսումնական պարապմունքների ընթացքում	Ուսումնական աշխատանքի գծով տեղակալ
38	Վերահսկել դպրոցի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջների կատարումը	Ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, ՄԿԱ գծով տեղակալ
39	Կատարել ընթացիկ հանձնարականներ	Ուսումնական տարվա ընթացքում	Վարչական և մանկավարժական աշխատողներ
40	<ul style="list-style-type: none"> <li>➤ Հաստատել 2023թ. բյուջետային օրացույցը</li> <li>➤ Նշանակել պատասխանատու՝ բյուջեի նախագծի մշակման ուղղությամբ աշխատանքների կատարման համար</li> <li>➤ Քննարկել բյուջեյի նախագիծը խորհրդակցական մարմիններում</li> </ul>	Սեպտեմբեր-դեկտեմբեր	Տնօրեն

41	Ճանոթանալ ուսումնական ծրագրերին, ուսումնական պլանների նախագծերին, նոր փորձարկվող դասագրքերին, ձեռնարկներին, մեթոդական ձեռնարկներին	Օգոստոս–Սեպտեմբեր	Տնօրեն, ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, մեթոդական միավորման նախագահներ, անդամներ
42	Ստուգել առարկայական մեթոդական միավորումների, աջակցության խմբի, լաբորանտների աշխատանքային, ուսուցիչների թեմատիկ պլանները, համակարգել հետագա աշխատանքները, կազմակերպել և վերահսկողություն սահմանել մ/մ աշխատանքների նկատմամբ:	Ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, ուսումնական աշխատանքի տեղակալ, մեթոդական միավորման նախագահներ, անդամներ
43	Վերահսկել առարկայական թեմատիկ պլանների, դասի պլանների, առարկայական չափորոշչային պահանջների, միավորային գնահատման ընթացիկ կատարողականը Մինչև 15 տարի դասավանդման փորձով ուսուցիչների համար սահմանել յուրաքանչյուր դասին համապատասխան պլանի պարտադիր առկայություն, 15–25 տարվա դասավանդման փորձով մանկավարժներին՝ յուրաքանչյուր թեմայի պլանավորում՝ առարկայական չափորոշչային վերջնարդյունքների ապահովմամբ, 26 և ավելի տարիների փորձով մանկավարժները՝ թեմայի նպատակի և իրականացվող աշխատանքի միջոցով ձևավորվող կարողունակության չափելի արդյունքի ներկայացում: 1) գիտելիք. 2) հմտություն. 3) դիրքորոշում. 4) արժեքային բաղադրիչ	Ուսումնական պարապմունքների ընթացքում	Տնօրեն, ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, մեթոդական միավորման նախագահներ, Դասավանդող ուսուցիչներ
44	Աշխատանքներ տանել սկսնակ ուսուցչի հետ՝ մանկավաժական գործունեության ուղղությամբ Աջակցել ուսումնառության համընդհանուր ձևավորման	Ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, մեթոդական

	հմտության զարգացմանը, 5 քայլով դասի պլանավորման սկզբունքների կիրառմանը		միավորման նախագահներ, անդամներ, մենթորական աշակցող խումբ
45	Կատարել դասալսումներ, փոխադարձ դասալսումներ՝ սահմանելով նպատակը և կատարելով վերլուծական անդրադարձ  2022-2023 ուստարվա ընթացքում կազմակերպել դասալսումներ շաբաթական հետևյալ ժամաքանակով. 1. տնօրեն՝ 4 ժամ 2. փոխտնօրեն՝ 6 ժամ 3. մ/մ նախագահ՝ 2 ժամ 4. ուսուցիչներ՝ 1 ժամ	Ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, ՄԿԱՏ, մեթոդական միավորման նախագահներ, անդամներ
46	Մանկավարժներին ծանոթացնել. ➤ մանկավարժական, հոգեբանական, մեթոդական և գիտաճանաչողական գրականության նորություններին ➤ հանրակրթության ոլորտը կարգավորող իրավական և նորմատիվային ակտերին	Ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, մեթոդական միավորման նախագահներ, անդամներ ուսումնական աշխատանքի գծով տեղակալ
47	Խորհրդատվություն տալ սովորողներին, ուսուցիչներին, ծնողներին՝ տվյալ առարկայի ուսուցման գործընթացի կազմակերպման վերաբերյալ	Ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, մեթոդական միավորման նախագահներ, անդամներ
48	Ուսումնասիրել աշխատանքի առաջավոր փորձը և այն տարածել դպրոցում:	ուստարվա ընթացքում	Տնօրեն ՌԲԱԳՏ
49	Ուսուցիչներին ընդգրկել որակավորման դասընթացներին:	ուստարվա ընթացքում	ՌԲԱԳՏ
50	Մասնախմբերի ղեկավարների օգնությամբ ստուգել ուսուցման տեխնիկական միջոցների օգտագործման վիճակը:	ուստարվա ընթացքում	ՏԱԳ տեղակալ, ՄԿԱ տեղակալ, մ/մ ղեկավար

51	Ուսուցիչներին ծանոթացնել ՀՀ Կառավարության որոշումներին, ԿԳՄՍՆ նախարարության հրահանգներին, հրամաններին և այլ նորմատիվային փաստաթղթերին:	Ուստարվա ընթացքում	ՈՒԱԳՏ, մ/մ ղեկավարներ
52	Վերահսկել համակարգչային դասերի կազմակերպումն ուսպլանով նախատեսված առարկաներից:	Ուստարվա ընթացքում	ՈՒԱԳՏ Համակարգչային դասասենյակի պատասխանատու
53	Բնագիտամաթեմատիկական առարկաներից յուրաքանչյուր ամիս անցկացնել մեկ բաց դաս 6–9 դասարաններում և արդյունքների քննարկման միջոցով տալ գնահատական	Ուստարվա ընթացքում	ՈՒԱԳՏ ՄՄ նախագահներ Մենթորական աջակցման խումբ Դասավանդող ուսուցիչներ
54	Հանձնարարել առարկայական մեթոդ միավորումներին ուստարվա ընթացքում հանդես գալ առնվազն մեկ մեթոդամանկավարժական բնույթի, առարկայական գեկուցումով: Այն քննարկել մեթոդմիավորման նիստում:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ուսումնական աշխ. գծով տնօրենի տեղակալներ, մմ նախագահներ, ուսուցիչներ
55	Կազմակերպել ինտեգրված դասեր՝ առնվազն 3 դաս յուրաքանչյուր առարկայից:	Ուստարվա ընթացքում	ՈՒԱԳՏ դասավանդող ուսուցիչ
56	Վերահսկել դպրոցում գործող խմբակների աշխատանքը	Ուստարվա ընթացքում	ՄԿԱԳՏ խմբակի ղեկավարներ
57	Վերահսկել և միշտ ակտիվ վիճակում պահել դպրոցի կայքէջը:	մշտապես	Տնօրեն, տնօրենի տեղակալներ, օպերատոր
58	Մշտապես անդրադառնալ գնահատման 10 միավորային սանդղակի միավորների բնութագրիչներին, հետևել, որպեսզի ուսուցիչները պահպանեն գնահատման կարգը	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ՈՒԱԳՏ

Հաշվի առնելով կրթության բովանդակության ընդհանուր պահանջները, որոնք սահմանված են հանրակրթական պետական և առարկայական չափորոշիչներով և ուսումնական ծրագրերով՝ անհրաժեշտ է որոշել ուսուցման կատարելագործման ուղիները: Այդ նպատակով նախատեսվում են մի շարք աշխատանքներ, որոնք միտում ունեն ուսման նկատմամբ սովորողների մոտ գիտակցական վերաբերմունքի մշակման, նրանց ճանաչողական հետաքրքրությունների, անհատի բազմակողմանի զարգացման և անհատականության ձևավորման ուղղությամբ: Չափազանց կարևոր է տարրական դասարաններում ուսուցման մակարդակի բարելավումը, տարբեր առարկաների դասավանդման մակարդակի սիստեմատիկ ուսումնասիրումը և վերլուծումը: Ուսուցման ընթացքում կարևոր է ուշադրություն դարձնել աշակերտների ինքնուրույն արդյունավետությանը:

h/h	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձը
1.	Կատարել դասաբաշխում, ուսուցիչներին ժամանակին ապահովել ուսումնական ծրագրերով:	հունիս-օգոստոս	Տնօրեն ՌԻԱԳՏ
2.	Ֆիզիկա և քիմիա առարկաների դասավանդումը բարելավելու նպատակով կատարելագործել լաբորատոր համակարգը, հարստացնել դպրոցի ուսումնական բազան:	ուստարվա ընթացքում	տնօրեն, ուսուցիչներ
3.	Աշխատանք տանել դասասենյակները և լաբորատորիաները անհրաժեշտ նյութերով ու սարքավորումներով կահավորելու ուղղությամբ:	ուստարվա ընթացքում	ուսուցիչներ, դասուղեկներ, ԾԽ, ՇԽ
5.	Աշխատանք տանել աշակերտներին դասագրքերով և գրենական պիտույքներով ապահովելու ուղղությամբ:	22.08.2022թ - 08.09.2022թ.	տնօրեն, ՌԻԱԳՏ, գրադ. վարիչ
6.	Սովորողների գիտելիքների որակը բարելավելու նպատակով կատարել դասալսումներ, արդյունքները քննարկել մեթոդմիավորման նիստերում, տնօրենին կից խորհրդակցություններում, մանկավարժական խորհրդի նիստերում:	ուստարվա ընթացքում	ՌԻԱԳՏ
7.	Գրավոր աշխատանքների միջոցով /հայոց լեզու, ռուսաց լեզու, անգլերեն, ֆրանսերեն, մաթեմատիկա/ ստուգել աշակերտների, գիտելիքները, ինքնուրույնությունը և տրամաբանական մտածողությունը:	հոկտեմբեր, ապրիլ	ՌԻԱԳՏ
8.	Հաշվի առնելով հայոց լեզվի գիտելիքների իմացության անհրաժեշտությունը, ուշադրության կենտրոնում պահել լեզվական գիտելիքների յուրացման մակարդակը միջին դպրոցում:	ուստարվա ընթացքում	տնօրեն, ՌԻԱԳՏ

9.	<p>Կազմակերպել առարկայական դպրոցական օլիմպիադաներ Նախապես կազմած տեքստերը ներկայացնել տնօրենին՝ հաստատման, ապահովել սովորողների մասնակցությունը օլիմպիադաների հաջորդ փուլերին:</p> <p>I փուլը.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Մաթեմատիկա և ինֆորմատիկա</li> <li>2. Ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն</li> <li>4. Հ.լեզու և գրականություն</li> <li>5. Հայ ժող. պատմություն</li> <li>6. Ռուսաց լեզու, անգլերեն և ֆրանսերեն</li> <li>7. Աշխարհագրություն և ՆՁՊ</li> <li>8. Շախմատ</li> </ol>	Նոյեմբեր-փետրվար	տնօրեն, ՌԲԱԳՏ, մ/մ Նախագահ
10.	<p>Դասալսումների և տնօրենության կողմից գրավոր աշխատանքների միջոցով ստուգել 1-ից 9րդ դասարանների աշակերտների գիտելիքները:</p> <p>Ստեղծել հարցարանների, առաջադրանքների բանկ՝ բազա, որը հնարավորություն կտա դասավանդող ուսուցիչներին շարունակ այն հարստացնելու նոր նյութերով և պարբերաբար ստուգելու 5–8րդ դասարանի սովորողների մնացորդային գիտելիքները:</p>	հոկտեմբեր ապրիլ	տնօրեն, ՌԲԱԳՏ, մ/մ Նախագահ
11.	<p>Ուսումնասիրել տառաճանաչության ընթացքը առաջին դասարանում, ինչպես նաև աշակերտների բանավոր խոսքի զարգացման արդյունքները տարրական դպրոցում և քննարկել մ/մ նիստերում:</p>	ապրիլ	ՌԲԱԳՏ, մ/մ Նախագահ
13.	<p>Դպրոցում կազմակերպել առարկայական տասնօրյակներ</p> <ol style="list-style-type: none"> <li>1. հ.լեզու և գրականություն</li> <li>2. մաթեմատիկա և բնագիտական առարկաներ</li> <li>3. դասվարական</li> <li>4. պատմություն</li> <li>5. օտար լեզուներ</li> <li>6. ՆՁՊ, ֆիզկուլտուրա, տեխնոլոգիա, կերպարվեստ, երաժշտություն</li> </ol>	<p>2022թ հոկտեմբեր նոյեմբեր, դեկտեմբեր</p> <p>2023թ մարտ20ապրիլ20 ապրիլի 20-մայիս 20</p>	ՌԲԱԳՏ, ՄԿԱԳՏ մ/մ Նախագահ
14.	<p>Ուշադրության կենտրոնում պահել առարկայական ծրագրերի կատարումը: Վերահսկել բնագիտական առարկաների դասաժամերի</p>	ուստարվա ընթացքում	տնօրենություն



	հագեցվածության մակարդակը փորձարարական և հետազոտական/նախագծային/աշխատանքներով:		
15.	Աշակերտների գիտելիքների որակը ստուգելու նպատակով կատարել դասալսումներ, ստուգել համագործակցային կարողությունների զարգացման մակարդակը միջին դպրոցում:	ուստարվա ընթացքում	տնօրեն, ՈԻԱԳՏ
16.	Ուսումնասիրել տառաճանաչության և գրելու կարողության ընթացքը առաջին դասարանում, արդյունքները քննարկել մ/մ նիստերում:	ապրիլ	տնօրեն, ՈԻԱԳՏ մ/մ նախագ.
17.	Կազմակերպել և անցկացնել բաց դասեր դասավանդվող բոլոր առարկաներից. Յուրաքանչյուր դասարանում 2022–2023 ուստարվա ընթացքում իրականացնել պարտադիր 1 ցուցադրական դաս՝ դասավանդման արդյունավետ նոր մեթոդի կիրառման ցուցադրությամբ: Կազմել համապատասխան ժամանակացույց՝ կշեղով ուսուցչի անուն, ազգանունը, առարկան, դասարանը	ուստարվա ընթացքում	տնօրեն, ՈԻԱԳՏ, մ/մ նախագահ, մենթորական աջակցման խումբ

Վերահսկողությունը ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման ուղիներից մեկն է: Այն ընդգրկում է դպրոցի գործունեության գրեթե բոլոր օղակները: Դրանցից ամենակարևորը դասալսումներն են, ուսուցչի և աշակերտների հետ զրույցները, աշխատանքային պլանների, դասամատյանների, սովորողների տետրերի, օրագրերի, մասնախմբերի աշխատանքային պլանների և այլ փաստաթղթերի ստուգումները, ինչպես նաև տնօրինության կողմից տրվող ստուգողական աշխատանքների և քննությունների արդյունքները:

h/h	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձը
1.	Ստուգել և տնօրենի հաստատմանը ներկայացնել ուսումնական առարկաների ծրագրային նյութերը, թեմատիկ պլանավորումները ըստ կիսամյակների:	01-20.09.22թ	ՌԻԱԳՏ
2.	Հայոց լեզու և գրականություն, պատմություն առարկաների տասնօրյակ. (անցկացնել դասալսումներ, տնօրինության կողմից գրավոր աշխատանքներ, արդյունքները քննարկել մ/մ նիստում և մանկխորհում):	10.10.-21.10. 2022թ.	տնօրեն, ՌԻԱԳՏ, մ/մ անդամ. ուսուցիչներ
